



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

Մամուլի հաղորդագրություն  
12 հոկտեմբերի 2021թ.

## Արմավիրի մարզի Գետաշեն գյուղի դպրոցում բացվեց նոր սպորտահլիճ

ԵՐԵՎԱՆ - Հոկտեմբերի 8-ին կայացավ Արմավիրի մարզի Գետաշեն գյուղի դպրոցի սպորտահլիճի բացման արարողությունը: Գետաշեն գյուղի 300-ից ավել երեխաներ ու երիտասարդներ այսուհետ հնարավորություն ունեն ստանալու որակյալ սպորտային կրթություն բարեկարգ ու անվտանգ միջավայրում՝ շնորհիվ ՔՈԱՖ-ի բարերարներ Օհանես Ախոյանի ու Նրա ընտանիքի, ինչպես նաև Hoops4Hayastan-ի առատաձեռն նվիրատվությունների:

ՔՈԱՖ-ը Գետաշենում սկսել է ծրագրեր իրականացնել դեռևս 2014 թվականից՝ իրականացնելով բազմաթիվ կրթական ծրագրեր: Այս պահին համայնքում իրականացվում են ՔՈԱՖ-ի 5 կրթական ծրագրեր՝ նկարչություն, բասկետբոլ, բանավեճի ակումբ, անգլերենի «Աքսես» ու «Աֆլաթուն» սոցիալ-ֆինանսական կրթության ծրագրերը: 2015թ. ՔՈԱՖ-ը վերանորոգեց Գետաշենի դպրոցը, հիմնեց «ատամնակայան»՝ հատուկ տարածք, որտեղ երեխաները սննդընդունումից հետո լվանում են իրենց ատամները, վերազինեց դպրոցի ճաշարանը, բացեց ստեղծագործարան և մեկնարկեց «Ազրոդպրոց» նախագիծը՝ նպատակ ունենալով երեխաներին փոխանցելու ջերմոցներ հիմնելու ու ազրոբիզնես վարելու հմտություններ: Ի դեպ, դպրոցին կից ջերմոցի տված բերքն օգտագործվում է դպրոցի ճաշարանի կողմից:

Նոր սպորտահլիճի կառուցումը համահունչ է ՔՈԱՖ-ի՝ երեխաների առողջ ապրելակերպի խրախուսման ու ապահով միջավայրում նրանց ֆիզիկական կրթությունն ապահովելու առաքելությանը: Հին սպորտահլիճն ուներ վնասված տանիք ու հատակ, կտրված էին ապակիները, չկար ջեռուցման համակարգ և պատշաճ սանհանգույց: Վերանորոգումից հետո, որն արժեցել է շուրջ 60,000 ԱՄՆ դոլար, նոր սպորտահլիճն ունի ջեռուցման համակարգ, անհրաժեշտ գույք, ամբողջովին վերանորոգված են տանիքը, հատակները, փոխված են ապակիները, առկա են հանդերձարաններ, ինչպես նաև մարզչի սենյակ: Նախագիծն իրականացվել է՝ սերտորեն համագործակցելով Գետաշենի դպրոցի տնօրինության հետ: Արդյունքում՝ սպորտահլիճը կօգտագործվի ոչ միայն դպրոցի սպորտային դասերի անցկացման, այլև ՔՈԱՖ-ի բասկետբոլի ծրագրի իրականացման համար: Բասկետբոլի առաջին խաղն էլ ընկերական էր ու տեղի ունեցավ ՔՈԱՖ-ի անձնակազմի և Գետաշենի դպրոցի թիմերի միջև:



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

## **«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին**

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: